

*պաշտպանութեան համար չի վարանիր իր աշակերտն յանդիմանելու իր այս արարքին համար:*

«Լուեալ եմ անախորժելի համբաւ եւ *srsմագոյն* զրոյց եւ ցաւագին ասացուածս վասն ձեր. ասեմ թէ Մովսէս կաթուղիկոսն միաբան ընդ Ֆռանկաց ուխտս եւ դաժինս եղեալ ընդ նոսա, եւ բազում բուղթս միաբանութեանս յուղարկեալ առ նոսա վասն միաբանութեան ընդ Հռովմայ եկեղեցւոյն եւ ընդունելոյ զժողովն Քաղփեդոնի: Եւ մեր լսելով զայս՝ առաւել սուգ եւ *srsմութիւն* լինի մեզ եւ ցաւք ի վերայ ցաւոց եւ վիճսք ի վերայ վճաց, մինչ զի լաւ համարեալ ինձ զմեռանելն քան թէ կենդանի մնալ եւ զայսպիսի աղէտալից բանս լսել: . . . Զոր քաւ լիցի եւ մի արասցէ զայս Տէր, որ ոչ վայել է քոյին խոհեմութեանդ, զի մի սուտ լիցի պարծանք մեր որ վասն ձեր, եւ մի ուրախ լիցի ի վերայ մեր որ ի սկզբանէ թեմամի բնութեանս. նա որ զատոյց եւ հեռացոյց զհեռաւորսն ի նեմարիս եւ յուղղափառ հաւատոյս եւ ուրախ եղել ի վերայ նոցա»:

*Նոյն թուղթին մէջ Գրիգոր Կեսարացի կ'ըսէ թէ* «ոմանք վկայեցին ստուգապէս, թէ ասացեալ է Խաչատուր Նուիրակդ, թէ Ֆռանկաց երկու բնութիւն անբաժանելի ա-